

ԳԻՏԷ՞Ք ԵՍ ԵՐԲ ԵՄ ԿԵԱՆՔԸ ՀԱՍԿԱՆՈՒՄ...

Գիտե՞ք ես երբ եմ կեանքը հասկանում,
Երբ արգելքներն են ճամբիս շատանում,
Երբ փորձությունն է ինձ հեռու տանում,
Երբ ինձ մարդիկ են իրենցից վանում,
Հենց այդ պահին եմ կեանքը հասկանում...

Գիտե՞ք էլ երբ եմ կեանքը հասկանում.
Երբ հեռանում է ճամբաս ընդարձակ,
Ու երբ կապում են ձեռքերս արձակ,
Երբ որ բերանս է փակում անտեղի,
Երբ քաղցրի տեղակ տալիս են լեղի ...

Գիտե՞ք էլ երբ եմ կեանքը հասկանում.
Երբ հակառակ են գնում գործերըս,
Երբ ձախողում են բոլոր փորձերըս,
Երբ կոտրում է սանդուղքն իմ սարքած,
Երբ փուշ է հագնում արտը իմ հերկած...

Գիտե՞ք էլ երբ եմ կեանքը հասկանում.
Երբ որ ըզգում եմ ոչնչությունըս.
Երբ որ գիշերը կտրում եմ քունըս.
Երբ դատարկում է իմ լեցուն տունըս.
Ու երբ տեսնում եմ փոփոխուած հունըս...

Գիտե՞ք էլ երբ եմ կեանքը հասկանում.
Երբ ինձ տեսնում եմ խիստ դատապարտուած,
Մանկան դէմ անգամ, անգոր ու պարտուած,
Երբ որ քանդում են պարիսպներս ամէն,
Որ եսիս տանեն ու խաչին գամեն...

Գիտե՞ք էլ երբ եմ կեանքը հասկանում.
Երբ որ ըզգում եմ խաչը շալակիս,
Շընորհքի ճերմակ եփուտը հագիս,
Տիրոջ քաղցրութեան համը բերանիս,
Եւ լուծուած տեսնում հարցերը եսիս...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ